

ՀՀ Լոռու Մարզի Սպիտակի համայնքապետարան

Պայմանագիր № ՀՀ ԼՍՍՀ-ԳՀԱՇՁԲ-25/030-3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

<<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՌՈՒՑՈՒՄ >>



ԳԻՐՔ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ,
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ

Երևան 2026



Տնօրեն

Ռ. Բադալյան

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում ընդհանուր 2600զծմ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով ոռոգման փակ համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ»

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Նախագծի թողարկման գրանցում		
Հ.	Ամսաթիվ	Նկարագրություն
1.	10/02/2026	Աշխատանքային նախագիծ

Աշխատանքային նախագիծը մշակեց

«ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան
Հայաստան, 0033, Երևան
Երզնկյան փող., 22/26 շենք
(Արաբկիր վարչ. շրջան)
Տնօրեն,

Հեռ.: +374-

Էլ. փոստ: citymaster.ltd@gmail.com

Ռաֆայել Բադալյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ: Բացատրական մաս: Աշխատանքների կազմակերպում, Գ
ծագրական մաս, Աշխատանքային ծավալներ

Գիրք 2 - Նախահաշիվ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման
խորհրդատվական ծառայությունների պայմանագիր N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-25/030-3

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
Հրավե րով նախատե սված չափաբա ժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափմա ն միավո րը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհա նուր գինը/Հ Հ դրամ	ընդհա նուր քանա կը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
4	71241200	Ներկայացված է ստորև	դրամ	2490000	2490000	1	Սպիտակ համայնք	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30-րդ օրացուցային օրը:

*Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընդունված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չափաբաժին 4

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակ

համայնքի Սպիտակ բնակավայրում ոռոգման արտաքին համակարգի կառուցում, Խնկոյան բնակավայրի ոռոգման ջրամբարի հիմնանորոգում գեոմեմբրանով, Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Շենավան բնակավայրի կենտրոնական փողոցի մի մասի ոռոգման համակարգի կառուցում, Սարամեջ բնակավայրի ոռոգման արտաքին համակարգի կառուցում»

Սպիտակ –

Հողային աշխատանքներ

Կառուցել ոռոգման համակարգ, ընդհանուր 620մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով և վաքերով:

Խնկոյան –

Հողային աշխատանքներ

Հիմնանորոգել գոյություն ունեցող ոռոգման ջրամբարը գեոմեմբրանով՝ մոտ 1 հա մակերեսով:

Կաթնաջուր –

Հողային աշխատանքներ

Կառուցել ոռոգման համակարգ, ընդհանուր 620մ երկարությամբ ե/բ վաքերով:

Սարամեջ –

Հողային աշխատանքներ

Կառուցել ոռոգման փակ համակարգ, ընդհանուր 2600մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով:

Շենավան –

Հողային աշխատանքներ

Կառուցել ոռոգման համակարգ, ընդհանուր 290մ երկարությամբ ե/բ վաքերով:

Աշխատանքների և համապատասխան շինարարական ապրանքների չափերի վերաբերյալ տեղեկատվությունը առավել հստակ կարտացոլվի շինարարական օբյեկտի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերում:

Սկիզբը	Ավարտը
Պայմանագրին կից համաձայնագրի կնքման օրվանից	30 /երեսուն/օրացուցային օր

Ընդհանուր դրույթներ	Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն
	Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն և ռուսերեն լեզուներով , ներկայացվեն 4 օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով
	Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի
	Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թվականի թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թվականի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան
	Ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր
	Նախահաշիվ
	Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ
Համաձայնեցումներ	Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի և ըստ անհրաժեշտության, պետական լիազոր մարմինների հետ
Փորձաքննություն	Նախագիծը պատվիրատուի կողմից կնդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում
Ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության առկայությունը նախագծողի կողմից պարտադիր պայման է:	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԽՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000545, 1-ին դաս

(ստորագրող, համար, դաս)

ՔԱՂԱՔԱՇԽԱԿԱՆ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ՔԱՅԱՌՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքացիության բնագավառում գործունեության տեղավորում)

ՏՐԱՎՄԵ

2024-09-03, «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ

(լիցենզիայի տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքացիության գործունեության տեղավորումը և բնակության վայրը)

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱՔԿԻՐ, ԵՐԶՆԿՅԱՆ Փ., 22, 26 ԲՆ.

գրանցվել է վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 03.09.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀԱՅԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG6F-1488-AE35-26A2

Սույն փաստաթուղթը տրված է քաղաքացիության էլեկտրոնային երանգի միջոցով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնութագրի ներդրումը հնարավոր է իրականացնել հետևյալ հղմով՝ <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԽՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000545-08

(ներդրողի մեղման, համարը)

«ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքացիության գործունեության ստեղծողի անվանումը)

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՌՈՒՄ ԵՎ ՋՐԱՇԼՈՒՄԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՋՐԱՇԼՈՒՄԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ
ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՄԵԼՈՐԱՑԻԱ

(քաղաքացիության բնագավառում գործունեության ենթաստեղծ)

03.09.2024թ.

(ներդրող տարու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝

03.09.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդրողը վավերական է լիցենզիայի ատկայության դեպքում

ՀԱՅԿԻԶ ՀԱՄԱՐ՝ UGD2-1B13-1C1E-39CD

Սույն փաստաթուղթը տրված է քաղաքացիության էլեկտրոնային ելակրթական ստուգման ու
էլեկտրոնային քննության ներքինում՝ հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):



Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ԳԱՐՐԻԷԼ ՄԵԼԻՍԵՆՅԱՆ	Հ	000217	2024-05-08



ՀԱՅԻՉ ՀԱՄԱՐ՝ UGD2-1B13-1C1E-39CD

Սույն փաստաթուղթը տրված է քացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներքինումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միանակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի պատվերով «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի կողմից 2025-2026 թ.թ. մշակվել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ընդհանուր 2600 գծմ պոլիէթիլենային խողովակներով ոռոգման փակ համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» աշխատանքային նախագիծը: Աշխատանքային նախագծի կազմման համար հիմք է հանդիսացել 08.12.2025թ. կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-25/030-3 ծածկագրով պայմանագրի Տեխնիկական բնութագիրը (Հավելված 1), աշխատանքային նախագծի իրականացման շրջանակներում Խորհրդատուի կողմից տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև Պատվիրատուի ներկայացուցիչների հետ կայացած քննարկումների արդյունքում ընդունված որոշումները:

Ըստ Պայմանագրի նախատեսվում է Սարամեջ բնակավայրի արտաքին ոռոգման համակարգի փաստացի ընդհանուր 1,670գծմ երկարությամբ ոռոգման փակ ջրագծի կառուցում՝ պոլիէթիլենային խողովակներով: Այս միջոցառումների իրականացման արդյունքում կբարձրանա ջրագծի սպասարկման ներքո գտնվող հողատարածքների բերքատվությունը և գյուղատնտեսական գործունեության արդյունավետությունը:

Սարամեջ բնակավայրը տեղակայված է Սպիտակ քաղաքից 10 կմ հեռավորության վրա՝ դեպի Երևան տանող ճանապարհին: Ծովի մակարդակից բարձր է 1720-1760 մ: Բնակավայրի կլիման բարեխառն է: Գյուղում առկա են մաքուր ջրաղբյուրներ:

Բնակավայրի գլխավոր փողոցն ասֆալտապատ է: Անցկացված է գիշերային լուսավորության ցանց:

Սարամեջ բնակավայրն ունի 550 հա վարելահող և 1000 հա արոտավայր: Վարելահողերի 45 տոկոսը ոռոգվող են:

Նախատեսվող ջրագիծ ոռոգման ջուրը տրվում է նոր վերանորոգված պլիէթիլենային էկրանով ջրամբարից:

Այդ նպատակով ջրամբարից նախատեսված է ջրթող խողովակ PE250 մմ տրամագծով, որի վրա կառուցված է նաև փականային հոր:

Սույն ծրագրով նախատեսվում է միացում իրականացնել վերը նշված խողովակին և կառուցել ոռոգման փակ խողովակաշար PE250- PE75մմ տրամագծերով պոլիէթիլենային ճնշումային խողովակներով, որը ոռոգման ջուր կապահովի կենտրոնական ճանապարհի հարևանությամբ գտնվող համայնքի ոռոգելի հողատարածքներին:

Ոռոգման ջրի բաշխման համար Խորհրդատուի կողմից մշակվել է ջրթող հանգույց՝ պողպատե և պոլիէթիլենային խողովակներով, որի վրա նախատեսվել է Ø50 մմ տրամագծով պողպատե կցաշտրթային փական:

Ոռոգման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է համայնքի կողմից ոռոգման ջրի բաշխման գրաֆիկի կազմում, որը կապահովի ջրի արդյունավետ և հավասարաչափ բաշխումը:







Նախագծով նախատեսվում է.

- Զրթող հանգույց (ՋՀ) – 30 հատ,
- Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN250, PN=1,0 ՄՊա, փորձարկումով – 700 մ,
- Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN200, PN=1,0 ՄՊա, փորձարկումով – 500 մ,
- Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN160, PN=1,0 ՄՊա, փորձարկումով – 360 մ,
- Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN110, PN=1,0 ՄՊա, փորձարկումով – 40 մ,
- Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN75, PN=1,0 ՄՊա, փորձարկումով – 70 մ,
- Զրամատակարարման կլոր ե/բ դիտահոր 1.5 մ տրամագծով – 1 հատ,
- Զրամատակարարման կլոր ե/բ դիտահոր 1.0 մ տրամագծով – 3 հատ,
- Սեպավոր փականների մոնտաժում DN200, PN=1,0 ՄՊա – 2 հատ,
- Սեպավոր փականների մոնտաժում DN150, PN=1,0 ՄՊա – 1 հատ,
- Սեպավոր փականների մոնտաժում DN50, PN=1,0 ՄՊա – 2 հատ:

Նախագծով նախատեսվում է տեղադրել անհրաժեշտ քանակի ջրթողներ, խողովակ-անցումներ և կարգավորման հանգույցներ (ջրթողների տեղը և քանակը ընտրվել է համայնքապետարանի և շահագործող կառույցի ներկայացուցիչների համաձայնությամբ): Շինարարության ընթացքում հնարավոր է կառույցների չափերը և տեղերը ենթարկվեն փոփոխության:

Շինարարական աշխատանքների սկսումից հետո անհրաժեշտ է հեղինակային հսկողի հետ համատեղ բոլոր ջրանցքների վրա նախատեսված կառույցները համաձայնացնել, ապա սկսել դրանց կառուցման աշխատանքները:

Նախագիծը կազմված է պահպանելով շինարարության իրականացման ՀՀ-ում գոյություն ունեցող նորմերը և կանոնները:

Հավելվածներ



ՇԻՆՄԱՍՏԵՐ ՍՊԸ

Հեռ. 098 41 04 04

E-mail: shinmaster.llc@mail.ru

ՀՀ, ք. Երևան, Երզնկյան 222. րն. 26

Ելից 08/03.02.2026թ.

ՀՀ Լոռու մարզի
Սպիտակ համայնքի ղեկավար
պարոն Ք. Նիկողոսյանին

Հարգելի պարոն Նիկողոսյան,

Հայտնում եմ Ձեզ, որ Սպիտակի համայնքապետարանի պատվերով «Շինմաստեր» ՍՊԸ նկերության կողմից 08.12.2025թ.-ին կնքված N «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-25/030-3» պայմանագրի շրջանակներում իրականացվում են **Սպիտակ համայնքի բնակավայրերում ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման** աշխատանքներ:

Մրցութային փաստաթղթերի պատշաճ մշակման և աշխատանքների ծավալների ճշգրիտ գնահատման նպատակով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն շինարարության ընթացքում առաջացող ավելցուկային բնահողի և շինարարական աղբի տեղափոխման հնարավոր ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում փափուկ բնահողի բերման տարածքների հեռավորությունների մասին:

Հարգանքով՝

տնօրեն՝



Ռ. Բաղայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, Էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«05» փետրվարի 2026թ. № 034/27-296

«ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

Ռ.ԲԱԴԱԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բադալյան.

Ի պատասխան Ձեր 03 փետրվարի 2026 թվականի գրության՝ տեղեկացնում եմ, որ շինարարական աղբը և ավելորդ բնահողը տեղափոխել շինհրապարակից մինչև 500 մ հեռավորությամբ գտնվող համայնքային տարածք:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝ 03/02/2026 Բ.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ



«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ



«HAYR EV VORDI

TITIZYANNER» LLC

Ի Ն Ժ Ե Ն Ե Ր Ա Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս

Տնօրեն՝



Հ. Տիտիզյան

Երևան 2026թ.

Երևան, Կենտրոն, Տպագրիչների 8 հասցե

☎ (+374) (093) 415325

✉ : otitizyan@mail.ru

Բացատրական մաս

Համաձայն <ՇԻՆՄԱՍՏԵՐ> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի 2026 թվականի հունվար ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման արտաքին համակարգերի կառուցման աշխատանքների համար: Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման արտաքին համակարգերի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղագնություն, ակնադիտարկման եղանակով, բացված փոսորակների միջոցով, ինչպես նաև հարակից տարածքներում մեր կողմից կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ:

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Գեոմորֆոլոգիական տեսակետից Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հայաստանի Լոռու մարզի Սպիտակ համայնքում: Սպիտակ քաղաքից հեռու է մոտ 5 կմ հարավ-արևմուտք: Ծովի մակարդակից բարձր է 1770 մ:

Կլիման ուսումնասիրվող տարածքների կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքները գտնվում է Սպիտակ համայնքում, ուստի բերում ենք նրա համապատասխան մի քանի կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքը համաձայն ՀՀՇՆ 22.01.2024 գտնվում է բարեխառն չափավոր խոնավ կլիմայական գոտում:

Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝ ըստ «Սպիտակ» օթերևութաբանական կայանների տվյալների

- Տարեկան միջին ջերմաստիճանը 7.1°C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 36°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -25°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 71%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 63%

- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 51%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 450-550մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 3.4մ/վ:
- Ձյունածածկի տևողությունը 40 օր:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 90սմ:



Նկ. 3- Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Շրջանի գեոմորֆոլոգիան Ուսումնասիրվող տարածքները առանձնանում է ռելիեֆի բազմազանությամբ: Տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային հոսքեր, որոնց արտաքին շերտը ծածկված է էյուվիալ-դեյուվիալ-պրոլուվիալ, դեյուվիալ-պրոլուվիալ, էյուվիալ-դեյուվիալ ծագման նստվածքներով՝ ներկայացված ավազակավային, մանրախճային և մանրաբեկորային նստվածքներով:


Հիդրոլոգիական պայմանները

Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 10մ-ից ցածր հորիզոնների վրա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.5g$ արագացմամբ:



Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտարկման եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքներում առանձնացվել է գրունտների երեք շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ-1 Ավազակավեր բաց շագանակագույն, դարչնա-շագանակագույն, խճի մանրախճի պարունակությամբ 15-20%, պինդ թանձրության, մանրամիջահատիկ հոծ, տեղ-տեղ փոշենման մասնիկների պարունակությամբ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (33⁹) III կարգ է:

Շերտ 2 Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ ավազակավերի լցոնով 15-25%: Ժամանակակից դելյուվիալ-պրոյուվիալ նստվածքներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (13) IV կարգ է:

Շերտ 3 Հրաբխային տարբեր ապարների մանրաբեկորային նստվածքներ ավազակավերի լցոնով 15-20%., տեղ-տեղ 5-10% բեկորանյութով: Ժամանակակից չորրորդական հասակի դելյուվիալ-պրոյուվիալ նստվածքներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (12) V կարգ է:

Աղյուսակ 1

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		1
Գրունտների անվանումները		Ավազակավ
Ծավալային խտությունը S/m^3	ρ	1,95
Տեսակարար խտությունը q/m^3	ρ	2,71
Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	1,45
Ներքին շփման անկյուն, աստ.	φ	$19^\circ 20'$
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	19,6
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R_0	2,0
Գրունտի կարգը	աղ.	III (33 ⁹)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		III

Աղյուսակ 1.1

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		2
Գրունտների անվանումները		Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ
Խտությունը q/m^3	P	1.80
Միներալների մասնիկների խտությունը q/m^3	P	2,61
Տեսակարար շաղկապվածությունը ՄՊա	C	0,003
Ներքին շփման անկյուն, աստ.	φ	$31^\circ 20'$
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	28.0

Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R ₀	3.0
Գրունտի կարգը	ադ.	IV (13)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		II

Աղյուսակ 1.2

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		3
Գրունտների անվանումները		Հրաբխային ապարների խճաքարային նստվածքներ
Ծավալային խտությունը տ/մ ³	ρ	2,0
Տեսակարար խտությունը տմ ³	ρ	2.59
Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	0,05
Ներքին շփման անկյուն, աստ.	φ	36°50′
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	38,0
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R ₀	4.0
Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ՄՆԻՊ IV-2-84-ի	ադ.	V (12)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		II

ՆԿ0+000- ՆԿ 16+70

0.0-0.60մ Ավազակավեր բաց շագանակագույն, դարչնա-շագանակագույն, խճի մանրախճի պարունակությամբ 15-20%, պինդ թանձրության, մանրամիջահատիկ հոծ, տեղ-տեղ փոշենման մասնիկների պարունակությամբ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (33^ա) III կարգ է :

0.60-2.5մ Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ ավազակավերի լցոնով 15-25%: Ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (13) IV կարգ է:

2.5-6.0մ Հրաբխային տարբեր ապարների մանրաբեկորային նստվածքներ ավազակավերի լցոնով 15-20%., տեղ-տեղ 5-10% բեկորանյութով: Ժամանակակից չորրորդական հասակի դելյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (12) V կարգ է:

Օ Պ Տ Ա Պ Ո Ր Ծ Վ Ա Ծ Պ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Յ Ա Ն Կ

1. ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն
2. ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ. Ինժեներատեխնիկական հետազոտությունների նյութերի փորձաքննության Կարգը
3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 103-Ն հրաման ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
4. ՄՆԻՊ IV-2-84 շինարարական նորմերի «Հողային աշխատանքներ» հավելված 1
5. ԳՕՍՍ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում:
6. ՀՀՇՆ 20.04.2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն
7. ԳՕՍՍ 58325-2018 (Հողեր. Դաշտի նկարագրություն(հետազոտության) ,
8. ԳՕՍՍ 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդներ.
9. ԳՕՍՍ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՎԵՐՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000804, 1-ին դաս

(ձեռքան, համալր, դասք)

ՔԱՂԱՔԱՎԵՐՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

(ընդարձակության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-09-13, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, ընդարձակության գործունեության տեղեկությունները)

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ, ԲՐՅՈՒՍՈՎ, 62 Շ., 31 ԲՆ.

(լիցենզիայի վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀԱՎԻԶ ՀԱՄԱՐ՝ UG3D-B197-32E6-5B48



Սույն փաստաթուղթը տրված է թացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային ընթերցանման ներքեմունքը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով իսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Աշխատանքների կազմակերպման քնդհանուր դրույթներ

Սույն նախագծով նախատեսված է իրականացնել Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման արտաքին համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ:

Նպատակները և աշխատանքների ամփոփագիրը

Նպատակները

«Սպիտակ համայնքի ոռոգման արտաքին համակարգերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ (Սարամեջ բնակավայրի)» աշխատանքային նախագիծը, մշակված է համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի պահանջների, ինչպես նաև տեղում իրականացված ուսումնասիրությունների և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում կայացրած որոշումների:

Աշխատանքների ամփոփագիր

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 2 գրքեր՝

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ, բացատրական մաս, աշխատանքների կազմակերպում, գծագրական մաս, աշխատանքային ծավալներ

Գիրք 2 - Նախահաշիվներ

Շինհրապարակների գտնվելու վայրը

Շինհրապարակը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում:

Ընդհանուր տեղեկություն շինհրապարակների և գոյություն ունեցող կառուցվածքների մասին

Շինհրապարակներ

Որպես շինհրապարակ ծառայում է Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի այն հատվածները, որտեղ նախատեսված է իրականացնել ներքոհիշյալ աշխատանքները:

Շինհրապարակի երկրաբանական տվյալները ավելի մանրամասն բերված են Գիրք 1-ի երկրաբանական եզրակացությունում:

Նախագծի շինարարության կազմակերպման մասը մշակված է ըստ СНИП 3.01.01.2008-ի դրույթներով, շինարարության տնողությունը հաշվարկված է ըստ ՇԿՆ-ի և կազմում է 1,5 ամիս, ըստ նշված օբեկտների շին. աշխատանքերը ըստ աշխատանքային ճակատի, այդ թվում 3 օր նախապատրաստական փուլի աշխատանքներ:

Մուտքը շինհրապարակ և պահեստներ

Մինչև շին. հրապարակ մուտք գործելը, Կապալառուն պետք է Պատվիրատուից ստանա համապատասխան թույլտվությունը:

Մինչև շինարարական աշխատանքների իրականացումը, Կապալառուն պետք է համոզվի շինհրապարակ տանող և շինհրապարակի ներսում ճանապարհների մատչելիության մեջ: Կապալառուն պետք է հետազոտի ճանապարհների վիճակը, հաշվի առնելով նրանց կրողունակության և գաբարիտային սահմանափակումները և շինհրապարակում աշխատող մեխանիզմների քաշն ու չափերը:

Թրթուրավոր մեխանիզմների տեղափոխումը ասֆալտապատ ճանապարհով անհրաժեշտ է իրականացնել համապատասխան տրանսպորտային միջոցներով:

Բաց փոստրակները, խրամուղիները և հորերը պետք է ցանկապատվեն, կահավորվեն նախագգուշացնող նշաններով և լուսավորվեն գիշերային ժամերին:

Շինհրապարակի յուրաքանչյուր առանձին մաս, որտեղ կատարվում են շինարարական աշխատանքներ, պետք է մատչելի լինի բանվորների, մեխանիզմների ու մեքենաների համար:

Շինարարական նյութերը պետք է ընդունվեն և պահեստավորվեն ընդունված կարգով՝ դրանց համար նախատեսված տեղամասերում կամ պահեստներում:

Ինժեներա-գեոդեզիական հետազննություն

Ընդհանուր դրույթներ

Կապալառուն շինարարական աշխատանքների կատարման ընթացքում պետք է ապահովի նախագծային նիշերը, թեքությունները, անկյունները և նախագծային մյուս պահանջները:

Տեղանքի տեղակապման տվյալներ

Հորերի և ոռոգման ջրագծերի առանցքային, ինչպես նաև հիմնական կետերի տեղակապումը պետք է ստուգվի և ընդունվի ինժեների կողմից:

Հենանիշը տրամադրվում է կապալառուին շինարարությունը սկսելու ծանուցագրի հետ, սակայն կապալառուն շինարարական աշխատանքները սկսելուց առաջ պետք է ստուգի հենանիշի ճշտությունը գլխավոր հենանիշի նկատմամբ:

Ժամանակավոր հենանիշեր

Կապալառուն շինությունների համար պետք է տեղադրի ժամանակավոր հենանիշեր, որոնց տեղը պետք է համաձայնեցվի ինժեների հետ:

Կապալառուն պետք է մակարդակաչափումով տեղակայի բոլոր ժամանակավոր հենանիշերը հիմնական հենանիշի հետ:

Շինարարության կազմակերպում

Ըստ շին.կազմակերպման նախագծի շին. աշխատանքների 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները

- ժամանակավոր շարժական շինությունների տեղադրում ըստ շինության ընթացքի
- շին. տեղամասի ժամանակավոր ցանկապատում ըստ ընթացքի
- ժամանակավոր ճանապարհային նշանների տեղադրում
- շին. տեղամասի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է ոռոգման ցանցի և հորերի կառուցման աշխատանքները:

Հոռոկային աշխատանքների համար ընտրված են փոքր և մեծ հզորության հակադարձ շերտավոր էքսկավատորներ, ավելցուկային բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերի միջոցով մինչև 13.0 կմ (մեքենա-մեխանիզմների պահանջվող տեսակները և քանակները տես համապատասխան աղյուսակի): Անմիջապես խողովակաշարերի և կառուցվածքների հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքի աշխատանքով՝ ձեռքի պարզագույն գործիքներով:

Բոլոր տիպի շին. աշխատանքներն անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ СНИП III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված

աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքային ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված: Շին. տեղամասը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. տեղամասի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. տեղամաս պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով:

Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթով, թույլ չտալով փոշու ամպի գոյացումներ:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկ, ըստ պահանջվող քանակի

Շինարարության տևողությունը՝ 1,5 ամիս

Աաջարկվող աշխատակազմի ցանկ

<i>№</i>	<i>Անվանումը</i>
1	Շինարարության ղեկավար
2	Շինարարության ճարտարագետ-շինարար
3	Շին. Մոնտաժային աշխատանքների աշխղեկ
4.	Էլեկտրիկ
5	Մետաղական կոնստրուկցիաների եռակցող
6	Պոլիէթիլենե խողովակների եռակցող
7	Ատաղձագործ
8	Բետոնագործ
9	Ներկարար
10	Գեոդեզիստ
11	Բանվոր
12	Խողովակների մոնտաժող

Աաջարկվող մեքենա-մեխանիզմների ցանկ

<i>№</i>	<i>Անվանումը</i>	<i>Քանակ/հատ</i>
1	Էքսկավատոր՝ հակադարձ շերտփով $V=0.5\div 1.2$ մ ³	1
2	Ավտոամբարձիչ (առնվազն 16մ սլաքի թռիչքով և 6տ բեռնունակությամբ)	1
3	Ինքնաթափ բեռնատար մեքենա 10տ բեռնատրոդությամբ	2
5	Պնսմատիկ հարվածահար մուրճ	2
6	Խորքային թրթռիչ	2
7	Հարթակային թրթռիչ	2
8	Շարժական էլեկտրաեռակցման սարքավորում	1
9	Նիվելիր/Տախեոմետր	1
10	Ներքին այրման շարժիչով շարժական գեներատոր	2
11	Էլ. եռակցող սարք	1
12	Զոդման սարք պոլիէթիլենե խողովակների համար	1

[illegible]

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի նվազեցման միջոցառումներ

Աշխատանքային նախագծով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի որոշ հատվածներում: Տարածքներում չկան հողի օտարման կամ ժամանակավոր օգտագործման խնդիր, քանի որ կառուցվելու են համայնքի փողոցներում:

Հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ՝ ուստի նրանք սահմանափակ են և կարճատև: Բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող միավորները (Տես ստորև):

Շինարարության ժամանակ կարելի է ակնկալել կարճատև բացասական ազդեցությունները՝

- Օդի աղտոտում
- Աղմուկ
- Երթևեկելի ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն
- Շրջակա միջավայրի աղտոտում շինարարական և կենցաղային աղբով
- Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով
- Ջրային և հողային ռեսուրսների աղտոտում քլորով:

Սոցիալական ազդեցություններից են Ճանապարհների խաթարումը և ծանրաբեռնվածության ավելացումը, բնակչության և շինարարների սպառնացող վտանգները և այլն:

Բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ

Հողային և ջրային ռեսուրսների աղտոտումը վառելանյութով և քսայուղերով բացառելու համար անհրաժեշտ է վերջիններս պահեստավորել մեկուսացված մակերեսի վրա՝ հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում, օգտագործված քսայուղերի հավաքման համար օգտագործել հատուկ տարաներ, որոնք հետագայում կհեռացվեն հատուկ տեղադրման վայրեր կամ վերամշակման համար հատկացված տեղանքներ:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու նպատակով դրանք տեղափոխել համայնքի համապատասխան աղբավայր՝ նախապես պայմանագիր ունենալով համայնքի ղեկավարության կամ աղբավայրը շահագործողների հետ:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող ***փոշու ազդեցությունը*** նվազեցնելու համար պարբերաբար ջրել շինարարության տարածքը:

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով՝ սահմանափակել գիշերային աշխատանքը բնակեցված տարածքներում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից:

Շինարարության ժամանակ ***բնակչությանը և շինարարներին սպառնացող վտանգները*** կանխելու նպատակով անվտանգության ժապավենով ցանկապատել շինհրապարակը, վերահսկել չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ, վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, կամրջակներ, իրականացնել

սարքավորումների պարբերական զննումներ որակավորված աշխատակիցների միջոցով, ինչպես նաև պարբերաբար անվտանգության աուդիտներ, շինարարների համար կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ:

Ապահովել աշխատանքային անվտանգության և առողջության կանոնները:


Օբյեկտի անվանումը՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման արտաքին համակարգի կառուցում

Ծավալաթերթ

Հ/Հ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. արժեքը (հազար ՀՀ դրամ)	Գումարը (հազար ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
1. Ջրագիծ - Ջ1					
